

## **ՀԱՆԳՈՒՑԱՅԻՆ ԳՐՈՒՅԹՆԵՐ**

**Մենք պետք է իմանանք, որ Քանանի երկիրը  
նախատիպերի համակարգում երկակի նշանակություն ունի.  
դրական կողմից՝ Քանանը խորհրդապատկերում է  
համարվանդակ Քրիստոսին՝  
Նրա անքննելի հարստությամբ հանդերձ,  
իսկ բացասական կողմից՝ Քանանը խորհրդապատկերում է  
Սատանայի խավար թագավորության երկնային մասը՝  
նրա սատանայական ուժերով հանդերձ:**

**Որպեսզի մենք լիովին ձեռք բերենք ու տիրենք Քրիստոսին՝  
որպես համարվանդակ երկրի, Աստծու կառույցի համար,  
պետք է սովորենք մեզ պահել, ղեկավարվել, կառավարվել և  
առաջնորդվել Տիրոջ անմիջական, առաջնային ներկայությամբ.  
Եթե մենք ունենում ենք Տիրոջ ներկայությունը, ունենում ենք  
իմաստություն, խորաթափանցություն, կանխատեսություն և  
ներքին գիտելիքներ իրերի վերաբերյալ.  
Տիրոջ ներկայությունը մեզ համար ամեն ինչ է:**

**Մենք պետք է փրկվենք անօրենությունից և  
անօրենության մշակ լինելուց, անենք այն ամենը, ինչ ճիշտ է  
Աստծու աչքին՝ հնազանդվելով Աստծուն ծառայելու սկզբունքին,  
հաղթահարելով հին ստեղծագործության սատանայական քառուր և  
նոր ստեղծագործության համար իրագործելով  
աստվածային տնտեսությունը:**

**Նորմալ քրիստոնյա լինելու, այսօրվա հաղթողներից մեկը լինելու,  
Տիրոջ ներկա կոչին պատասխանելու և  
Նրա ներկա կարիքը Նրա վերականգնման մեջ բավարարելու համար  
մենք պետք է լինենք այսօրվա հռութները և  
Աստծու տնտեսությանը դառնանք,  
մտնենք Էմմանուելի երկիրը և ամուսնանանք Քրիստոսի հետ,  
որպեսզի Քրիստոսին ծնունդ տանք՝ բավարարելու համար  
և՛ Աստծու, և՛ մարդկանց այսօրվա կարիքը:**

**Հետուի գրքի, Դատավորաց գրքի և Հռութի գրքի  
թաքնված, խորքային նշանակությունը**

1. Հին Կտակարանի պատմություններն ու մարգարեությունները ուսումնասիրելիս մեզ անհրաժեշտ է բոլոր Գրվածքներում առկա Աստծու հավիտենական տնտեսության լիարժեք և համակողմանի նկարը Քրիստոսի և եկեղեցու վերաբերյալ, որն ավարտունանում է Նոր Երուսաղեմում: Սա մեզ ոչ միայն ավելի լայն տեսություն կընձեռի, այլև Աստծու նպատակի ավելի խորքային նշանակությունը՝ ներկայացնելով Հին Կտակարանի բոլոր պատմությունները և մեզ տալով մարգարեությունները: Հին Կտակարանի բոլոր պատմությունների և մարգարեությունների շրջանակը, կենտրոնը և խորքային նշանակությունը պետք է լինի Քրիստոսը և Նրա Մարմինը, որն Աստծու հավիտենական տնտեսության համար վերջնականապես կավարտունանա Նոր Երուսաղեմում:
2. Որպեսզի Աստված Իր այդպիսի հավիտենական տնտեսությունն իրականացներ, Նրան անհրաժեշտ էր երկինքը ստեղծել երկրի համար և երկիրը՝ մարդու համար (Ձք 12:1): Աստված մարդուն ստեղծեց Իր պատկերով և ըստ Իր նմանության, հոգով, որպեսզի մարդը շփվի Աստծու հետ, ստանա Նրան, պահի Նրան և ընդունի Նրան՝ որպես իր կյանքի և բովանդակության: Շատ ցավալի էր, որ այս մարդն Աստծուց և Աստծու՝ Իր տնտեսության համար ունեցած նպատակից ընկավ: Հետո Աստված ընկած մարդկությունից ընտրեց Աբրահամ անունով մի մարդու և նրա հետնորդներին, և Նա նրանց առանձնահատուկ ժողովուրդ դարձրեց որպես Իր սիրելի ընտրյալը բոլոր ազգերի (հեթանոսների) մեջ: Դրա համար Աստծուց չորս հարյուր տարուց ավելի պահանջվեց, որպեսզի ստեղծեր, կազմեր և ձևավորեր այդպիսի ընտրյալների, որոնք փոխարինեցին ադամական ցեղին՝ Իր հավիտենական տնտեսությունը իրագործելու համար: Աստված Իր ընտրյալ ժողովրդին ինչպես Եգիպտոսում, այնպես էլ անապատում անցկացրեց փորձությունների, չարչարանքների միջով, որպեսզի նրանք կարողանային ուսուցանվել, կարգավարժվել և որակավորվել, որպեսզի Իր հետ կոորդինացվեին Քրիստոսի համար այս երկրի վրա Իր խոստացած երկիրը վերցնելու և պատշաճ մարդիկ ապահովելու հարցում՝ Քրիստոսին մարդկային ցեղի մեջ ծնունդ տալու համար: Աստծու խոստացած երկրին Քրիստոսի համար տիրելը և Քրիստոսին մարդկային ցեղի մեջ ծնունդ տալու նպատակով պատշաճ մարդիկ ապահովելը երեք գրքերի՝ Հետուի, Դատավորաց և Հռութի, երկու գլխավոր կետերն են Հին Կտակարանի պատմության բաժնում: Այս երկու հիմնական կետերը՝ երկրին Քրիստոսի համար տիրելն ու Քրիստոսի համար պատշաճ նախնիներ ապահովելը, Հետուի գրքից մինչև Հռութի գիրքն ընկած պատմության հոգին են: Դրանք Հին Կտակարանի պատմության այս հատվածի թաքնված, խորքային նշանակությունն են: Մենք պետք է սրա

ՀԵՍՈՒԻ ԳԻՐՔ, ԴԱՏԱՎՈՐԱՅ ԳԻՐՔ, ՀՌՈՒԹԻ ԳԻՐՔ

վերաբերյալ հստակ տեսություն ունենանք: Հակառակ դեպքում այս երեք գրքերի մեր բյուրեղացում-ուսումնասիրությունն ապարդյուն կլինի, ճիշտ ինչպես հրեա և քրիստոնյա շատ պատմաբանների, Աստվածաշնչի ուսումնասիրողների և Գրվածքների ուսուցիչների ուսումնասիրությունները:

3. Եթե Տիրոջ ողորմությամբ մենք այսպիսի տեսություն տեսնենք, Հին Կտակարանի պատմության այս հատվածը մեզ օգուտ կբերի ճիշտ այնպես, ինչպես Նոր Կտակարանը: Նման տեսությունը մեզ կօգնի տեսնելու, որ երկրի վրա Աստծու ժողովրդի պատմությունն իրականում աշխատող Աստծու պատմությունն է, ով Հին Կտակարանում եռանդ է հաղորդում Իր ընտրյալ մարդկանց միջավայրում, և նույնիսկ գործող Աստծու պատմությունը, ով եռանդ է հաղորդում Իր փրկագնած մարդկանց մեջ և նրանց Իր հետ միասին եռանդ հաղորդել տալիս՝ Քրիստոսի և Իր աճի հետ կապված Իր հավիտենական տնտեսության իրականացման համար, որը կավարտունանա Նոր Երուսաղեմում: Հուսով եմ՝ այս ուսուցման միջոցով բոլորս կարող ենք տեսնել ու գիտակցել, որ մեր ապրելակերպը, մեր ամենօրյա քայլը, մեր սովորելը, մեր աշխատանքը և մեր բիզնեսը պետք է այսօր երկրի վրա Աստծու հրաշալի ու գերազանց շարժման մեջ լինեն Աստծու պատմության մի մասը: Նորմալ քրիստոնյա լինելու, այսօրվա հաղթողներից մեկը լինելու, Տիրոջ ներկա կանչին պատասխանելու և Տիրոջ վերականգնման մեջ Նրա ներկա կարիքը բավարարելու համար ամենևին բավարար չէ պարզապես այսպես կոչված լավ եղբայր կամ լավ քույր լինելը, եկեղեցական հավաքույթներից պարբերաբար մասնակցելը, ճիշտ վարվելը և մի կյանքով ապրելը, որը մարդկանց աչքին ինչ-որ չափով կատարյալ է: Մենք պետք է Իր պատմության մեջ մեկ լինենք Աստծու հետ, ով շարժվում է Իր սիրող հաղթողների մեջ և նրանց եռանդ է հաղորդում կյանքում, ապրելակերպում և այս երկրի վրա մեր այսօրվա բոլոր գործերում: Մենք պետք է Աստծու այսօրվա պատմությունը գրենք: Պետք է առաջ քայլերթենք՝ մեկ լինելով եռանդ տվող Աստծու հետ. Նրա մեջ, Նրա հետ, Նրանով և Նրա համար: Մենք պետք է կենսական լինենք, կենդանի և գործուն: Պետք է լինենք այսօրվա Հեսուն և Քաղերը, որպեսզի Քրիստոսի համար տիրենք Աստծու խոստացած երկրին, որպեսզի դառնանք Նրա սեփականությունը: Պետք է լինենք այսօրվա հռութները, որպեսզի դառնանք դեպի Աստծու տնտեսությունը, մտնենք Էմմանուելի երկիրը և ամուսնանանք Քրիստոսի հետ, որպեսզի կարողանանք Քրիստոսին ծնունդ տալ՝ այսօր մարդկանց կարիքը բավարարելու համար: Մա պետք է լինի այս երեք գրքերի՝ Հեսուի, Դատավորաց և Հռութի խորքային նշանակությունը: Այս ուսուցման արդյունքը պետք է լինի Քրիստոսի համար Աստծու խոստացած երկիրը ձեռք բերելն ու գերազանց Քրիստոսին ծնունդ տալը՝ բավարարելու համար և՛ Աստծու, և՛ մարդկանց այսօրվա կարիքը:

Առաջին հաղորդում

**Աստծու պատվերը, խոստումը և խրախուսանքը Հեսուին**

Գրվածքների ընթերցում. Հս 1:1-9

**I. Հեսուն Քրիստոսի նախատիպ է հետևյալ տեսանկյուններով.**

Ա. Եբրայերեն «Հեսու» անվան հունարեն համարժեքը «Հիսուս»-ն է (Եբր 4:8, Գրծ 7:45), ինչը նշանակում է «Եհովա Փրկիչը» կամ «Եհովայի փրկությունը»՝ Մտք 1:21, Թվց 13:16.

1. Քրիստոսը՝ որպես մեր Առաջնորդը, մեր իրական Հեսուն է՝ որպես մեր փրկության Պարագլուխը (Եբր 2:10, 4:8), ով մեզ առաջնորդում է փառքի մեջ և Աստծու խոստացած երկրի հանգստի մեջ Քրիստոսի՝ որպես մեր կատարյալ խաղաղության և լիարժեք բավարարվածության հետ՝ 2:10, 4:11, Երկ Օր 12:9, Մտք 11:28-30:

2. Հեսուն Քրիստոսի՝ որպես Մովսեսով խորհրդապատկերված օրենքը փոխարինող շնորհքի նախատիպն է (Հս 1:2ա, Հվի 1:17). երբ օրենսդիր Մովսեսը մեռավ, Հեսուն եկավ ժողովրդին բարի երկիրը բերելու համար (Հս 1:1-4). նա Տեր Հիսուսի՝ որպես մեր Առաջնորդի նախատիպն է, ով մեզ բերում է Իրեն՝ որպես մեր հանգստի, որպես բարի երկրի իրականության, վայելելու՝ Երկ Օր 8:7-10, 12:9, Փլպ 1:19, Եփս 3:8, Կդս 1:12, 2:6-7, Եբր 4:8-9, Մտք 11:28-29:

Բ. Ամաղեկի դեմ պատերազմելու պարագայում (Ելց 17:8-16) Ամաղեկը մսեղիի՝ որպես ընկած հին մարդու հանրագումարի նախատիպն է. Հեսուն ներկա և գործնական Քրիստոսի նախատիպն է՝ որպես ներբնակվող, պատերազմող Հոգու՝ Նրա, ով պատերազմում է մսեղիի դեմ և այն մահվան մատնում՝ Հոմ 8:9-13, Գդտ 5:16-17, 24.

1. Մսեղիի նպատակն այն է, որ մեզ հետ պահի համաբովանդակ Քրիստոսին՝ որպես մեր բարի երկրի, լիարժեքորեն վայելելուց:

2. Աստծու տնտեսությունը մեզ փրկում է մսեղիից, բերում Հոգու մոտ, որպեսզի կարողանանք Եռամեկ Աստծու հարստության օրհնությանը մասնակցել՝ Հոմ 7:17-8:2, Գդտ 3:14, Եփս 1:3-14:

Գ. Քառասուն տարեկան հասակում Հեսուն միացավ Քաղեբին (և նրանք դարձան տասներկու լրտեսներից երկուսը, որոնց սիրտը Աստծու խոսքը որպես իրենց հավատքն ընդունելու շնորհիվ լի էր հավատքով), որպեսզի հոգ տանեին Աստծու շահերի համար, այսինքն, որ Նրա ժողովուրդը տիրեր բարի երկրին. Աստծու փրկագնածներից միայն երկու հաղթողներ՝ Հեսուն և Քաղեբը, անապատում ստացան բարի երկրի մրցանակը՝ Թվց 13:30, 14:6-9, 27-30, Հոմ 10:17, Գդտ 3:3, 5, Եբր 11:5-6, Փլպ 3:13-14, տես Գրծ 6:5.

1. Ըստ Թվց 13-14-րդ գլուխների գրառման՝ Իսրայելի ժողովուրդը անհավատության չար սիրտ ուներ. Հեսուն և Քաղեբը հորդորում և զգուշացնում էին ժողովրդին՝ ասելով. «Մի՛ ապստամբեք Եհովայի դեմ»

## ՀԵՍՈՒԻ ԳԻՐՔ

(Խ. 9). այս բառերը ցույց են տալիս, որ Տիրոջը չհավատալ նշանակում է ապստամբել Նրա դեմ՝ Թվց 13:31-33, 14:1-3, 6-11, Երկ Օր 1:26, 32:

2. Եթե մենք ուզում ենք լիովին տիրել Քրիստոսին՝ որպես բարի երկրի, պետք է Տիրոջը խնդրենք մեզ փրկել անհավատության շար սիրտ ունենալուց. այդպիսի կարծրացած սիրտ ունենալ նշանակում է կենդանի Աստծուց ընկնել, շեղվել՝ ԽԽ. 25-26, 28, 35-39, 9:23, Գրծ 6:5ա, Եբր 3:7-13:
3. Մեր քրիստոնեական քայլքը հավատքով է, ոչ թե երևույթով (Բ Կրթ 5:7). ուստի մենք պետք է մեր հայացքն անընդհատ շրջենք դեպի Հիսուսը՝ մեր հավատքի Հեղինակն ու այն կատարյալ Դարձնողը (Եբր 12:1-2). մեր հավատքը մեզնից չէ, այլ Նրանից, ով Իրեն մեր մեջ է ներդնում որպես հավատացող տարրի, որպեսզի հավատա մեր փոխարեն՝ Գղտ 2:20, Բ Պտ 1:1:
4. Մենք պետք է գիտակցենք, որ քրիստոնյայի համար անհավատությունն ամենամեծ մեղքն է. եթե մենք ամուր բռնենք Աստծու Խոսքը և հավատանք Նրա Խոսքին, ամեն ինչ լավ կլինի. երբ մենք ապրում ենք մեր զգացմունքներով և չենք վարժում մեր հավատքի հոգին և մեր սիրտը չենք շրջում դեպի Տերը, որպեսզի հավատանք աստվածային փաստերին Աստծու Խոսքում, որը Նրա ուխտն է՝ Նրա կամքը մեզ համար, մենք ապստամբում ենք Աստծու Խոսքի դեմ, Աստծուն վիրավորում և Նրան ստախոս դարձնում՝ Երկ Օր 1:25-26, Եբր 3:12, 16-19, 4:2, 6, 11:1, Հռմ 3:4:
5. Մենք չպետք է վախենանք կամ սարսափենք մեր համոզմունքների, զգացմունքների և իրավիճակների ամպերից. պետք է ապրենք նոր ուխտի ներքո և չհավատանք որևէ ձախողման, տկարության, խավարի կամ բացասական բանի. մենք ուխտյալ ժողովուրդ ենք, և մենք ունենք խոստման այս կամ այն խոսքը, որը բավարարում է ամեն կարիք՝ Ծնդ 9:8-17, Հյտ 4:2-3, Ողբ 3:22-23, Հռմ 8:1, Բ Կրթ 12:9, Բ Տմբ 1:10, 2:1, Հղ 24, Ա Հվի 1:9, Ա Կրթ 1:9:
6. Մեր հոգին հարություն առած, պնդատիկ Քրիստոսի՝ որպես նոր ուխտով բոլոր կտակված բաների իրականության «բանկային հաշիվ» է. կյանքի Հոգու օրենքի շնորհիվ այս բոլոր կտակված բաները բաշխվում են մեր մեջ և մեզ համար իրական դառնում. քանի որ եկեղեցու մարդիկ ուխտյալ մարդիկ են, մենք կարող ենք իրականում կոչվել ուխտի եկեղեցի՝ Եսյ 42:6, 49: 8, Հռմ 8:2, 10, 6, 11, 16, Եբր 8:10, Հվի 16:13:

**II. «Ոչ որ չի կարողանա դեմ կանգնել քեզ քո կյանքի բոլոր օրերին: Ինչպես Ես Մովսեսի հետ էի, քեզ հետ կլինեմ. քեզ չեմ թողնի, ոչ էլ կլքեմ: Չորացի՛ր ու քաջասի՛րտ եղի՛ր, որովհետև դու այս ժողովրդին ժառանգել կտաս այն երկիրը, որը Ես նրանց հայրերին երդվեցի տալ իրենց: Միայն թե զորացի՛ր ու շատ քաջասի՛րտ եղի՛ր, որպեսզի հաստատապես վարվես Իմ ծառա**

**Մովսեսի՝ քեզ պատվիրած ամբողջ օրենքի համաձայն: Գրանից աջ կամ ձախ մի՛ շեղվիր, որպեսզի ուր էլ գնաս, հաջողություն ունենաս»՝ Հս 1:5-7.**

- Ա. Այն, որ Եհովան Հետուին ասաց, որ ինչպես Ինքը Մովսեսի հետ էր, Հետուի հետ էլ կլինի, շատ կարևոր էր. մի որոշակի պահի Տերը Մովսեսին ասաց. «Իմ ներկայությունը կգնա քեզ հետ, և Ես քեզ հանգիստ կտամ» (Ելց 33:14). քանի որ Մովսեսն Աստծու սրտին շատ մոտ ու Աստծու սրտի համաձայն մարդ էր, նա լիարժեք չափով ուներ Աստծու ներկայությունը:
- Բ. Նոր Կտակարանում Հիսուսի ներկայությունը Էմմանուելն է, այսինքն՝ «Աստված մեզ հետ» (Մտք 1:23, 18:20, 28:20). Քրիստոսը՝ որպես իրականության Հոգին, կենդանարար Հոգին, Էմմանուելն է՝ Աստվածային Երրորդությունը մեր հոգում (Բ Տմք 4:22):
- Գ. Մենք պետք է անընդհատ վարժենք հավատքի մեր հոգին, որպեսզի գորանանք և շատ քաջասիրտ լինենք՝ վայելելու համաբովանդակ Քրիստոսին, ով խորհրդապատկերված է բարի երկրով՝ որպես այսօր մեր ժառանգության գրավականով, որը հաջորդ դարաշրջանում և հավիտենապես հրաշալի Քրիստոսի մեր լիակատար և հավիտենական ժառանգության մի փորձանմուշ է՝ Բ Կրթ 4:13, Եփս 1:14, 18, Բ Կրթ 1:22, 5:5-6ա:
- Դ. Մենք պետք է Տիրոջն ընդունենք որպես մեր ուժի և քաջության, որպեսզի ամեն հանգամանքում մեծարենք Քրիստոսին, այսինքն՝ Նրան փորձառաբար ապրենք գերագույն վայելքով (Փլպ 1:20, 4:11-13). մենք միշտ կարող ենք հռչակել. «Եհովան է իմ լույսը և իմ փրկությունը. ումի՞ց պիտի վախենամ. Եհովան իմ կյանքի ուժն է. ումի՞ց պիտի սարսափեմ»՝ Սղմ 27:1:
- Ե. Մահը մի ժամանակ թագավորում էր մեզ վրա (Հոմ 5:14), և մենք դրա ստրկության տակ էինք՝ անընդհատ վախենալով մահից. քանի որ Տերը ոչնչացրեց բանասարկուին և վերացրեց մահը (Եբր 2:14-15, Բ Տմք 1:10), մենք այժմ այլևս մահից վախ չունենք և ազատ ենք դրա ստրկությունից:
- Զ. «Եհովան չի լքի Իր ժողովրդին, և ոչ էլ կթողնի Իր ժառանգությունը» (Սղմ 94:14), «Տերն իմ Օգնականն է, և չեմ վախենալու: Մարդն ինձ ի՞նչ է անելու» (Եբր 13: 6), «Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ կարող է մեզ դեմ լինել»՝ (Հոմ 8:31):
- Է. Մենք պետք է լինենք նրանք, ովքեր բոցավառում են Աստծու կողմից տրված իրենց հոգին, որը երկչոտության հոգի չէ, այլ զորության, սիրո և զգաստամտության (Բ Տմք 1:6-7). մեր զգացմունքներն ընդհանրապես սուտ են. մենք պետք է միշտ հավատանք և հռչակենք, որ մենք ուժեղ ենք, որ լի ենք սիրով և որ մեզ համար ամեն բան շատ պարզ է. այդժամ կկարողանանք «ուժեղ լինել և քաջասիրտ» (Հս 1:6)՝ մտնելու համաբովանդակ Քրիստոսի մեջ և վայելելու Նրան՝ որպես բարի երկրի իրականության:
- Ը. Մենք չպետք է «աջ կամ ձախ» շեղվենք (Խ. 7) Աստծու հավիտենական

## ՀԵՍՈՒԻ ԳԻՐՔ

տնտեսության երկնային տեսությանը վերաբերող սուրբ Խոսքից, որպեսզի ուր էլ որ գնանք, հաջողություն ունենանք՝ Տիրոջն արժանի կերպով քայլելով՝ «ամեն բանում Նրան հաճեցնելու համար» (Կղս 1:10). ուստի նախքան մեր տեղափոխվելը մենք կարող ենք վկայություն ձեռք բերել, որ մենք «Աստծուն հաճելի ենք» այն բանի շնորհիվ, որ անընդհատ հավատում ենք, որ Աստված է, և մենք չենք (Եբր 11:5-6, Ծնդ 5:21-24):

### III. «Օրենքի այս գիրքը թող չհեռանա քո բերանից, այլ դրա մասին օր ու գիշեր խորհրդածիր, որպեսզի հաստատապես վարվես այնտեղ գրված բոլոր բաների համաձայն: Քանի որ այդ ժամանակ դու քո ճանապարհը բարգավաճող կդարձնես և այդ ժամանակ դու հաջողություն կունենաս: Ես քեզ չպատվիրեցի՞. գորացի՛ր և քաջասի՛րտ եղի՛ր, մի՛ վախեցիր ու մի՛ սարսափիր: Քանի որ Եհովան՝ քո Աստված, քեզ հետ է ուր էլ որ գնաս»՝ Հւ 1:8-9.

Ա. Հետուն պետք է Աստծու խոսքով զբաղված լինել և թույլ տալ, որ խոսքը զբաղեցնել իրեն (հմմտ Կղս 3:16). խոսքով զբաղված ու լցված լինելով՝ նա Աստծու խոստացած երկրին տիրելու հարցում կբարգավաճեր և հաջողություն կունենար:

Բ. Հետուի համար Աստծու Խոսքում գրված բոլոր բաներն իրագործելու բանալին և Աստծու խոստացած երկրին տիրելու հարցում նրա բարգավաճման, հաջողության, ուժի և քաջության բանալին նրա չթողնելն էր, որ Աստծու խոսքը հեռանար իր բերանից՝ օր ու գիշեր դրա մասին խորհրդածելով. «քո բերանից» բառերը ցույց են տալիս, որ խորհրդածելը հիմնականում կիրարկվում էր բարձրաձայն խոսելով.

1. «Խորհրդածել» բարգմանված եբրայերեն բառն իմաստով հարուստ է. այն ենթադրում է երկրպագել, ինքն իրեն զրուցել և բարձրաձայն խոսել. խոսքի շուրջ խորհրդածել նշանակում է մանրակրկիտ մտորելու միջոցով համոզել ու վայելել այն՝ Սղմ 119:15, 23, 48, 78, 97-100, 148, հմմտ խխ. 9-11:

2. Աղոթելը, ինքն իրեն խոսելը և Տիրոջը փառաբանելը նույնպես կարելի է ներառել խոսքի մասին խորհրդածելու մեջ. խորհրդածել Աստծու խոսքի մասին նշանակում է վայելել Նրա խոսքը՝ որպես Նրա շունչը (Բ Տմբ 3:16), և այդպիսով լցվել Աստծով, ներշնչել Աստծուն և հոգևոր սնուցում ստանալ:

3. Խոսքի մասին խորհրդածել նշանակում է «որոճալ», ինչպես կովն է խոտ ուտում (Ղտց 11:3). երբ խորհրդածում ենք Աստծու խոսքի մասին, մենք այն ստանում ենք երկար ու բազմակի քննելու միջոցով. ճիշտ ինչպես կովն է որոճում, մենք կարող ենք դա անել առավոտ վաղ խոսքն այնպես աղոթքառնթերցելով, որ կարողանանք սնուցում ստանալ՝ բազմակի քննելով այն, ինչ ստանում ենք Աստծու խոսքից:

Գ. Մաղմուսերգուն ասաց. «Քո կանոնագրերի մասին կխորհրդածեմ. և Քո ճանապարհներին ակնածանքով կնայեմ: Քո որոշումներին կհաճեմ, Քո

խոսքը չեմ մոռանա: Ես Քո որոշումներից հաճույք կստանամ. Քո խոսքը չեմ մոռանա»՝ Սղմ 119:15-16.

1. Երբ սաղմոսերգուն խորհրդածում էր Աստծու խոսքի մասին, այն դառնում էր նրա հաճությունը, նրա ուրախությունն ու ցնծությունը (Երմ 15:16), և նա չէր ուզում մոռանալ Աստծու խոսքը. ուստի այն դառնում էր նրա մշտական և հավիտենական սնուցումը՝ Սղմ 119:105, 130:

2. Խորհրդածելով Աստծու խոսքի մասին՝ մենք հիշում ենք Նրա խոսքը և կենդանանում դրանով. «Հիշի՛ր քո ծառային ասած խոսքը, որի վրա Դու ինձ հույս դնել տվեցիր: Սա է իմ մխիթարությունը իմ նեղության մեջ, քանի որ Քո խոսքն ինձ կենդանացրեց»՝ Խխ. 49-50:

Դ. Խոսքի մասին խորհրդածելն ավելի հարուստ է, ավելի լայն և ավելի ընդգրկուն, քան աղոթքարձերեցելը, քանի որ այն ներառում է աղոթքը, երկրպագությունը, վայելքը, գրույցը, խոնարհումը և նույնիսկ Աստծու խոսքը ստանալու համար մեր ձեռքերը բարձրացնելը (Խս. 48). մեր ձեռքերը դեպի Աստծու խոսքը բարձրացնելը նշանակում է ցույց տալ, որ մենք այն ջերմորեն ենք ընդունում և ուրախությամբ, և որ մենք դրան «ամեն» ենք ասում՝ Նեմ 8:5-6:

Ե. Երբ մենք մեր հոգով այսպես հպվում ենք Տիրոջ խոսքին և շարունակաբար հաղորդակցվում Նրա հետ, պետք է լվացվելու, ջերմանալու, քարմանալու, թրջվելու և Աստվածաշնչի խոսքի մատակարարումը ստանալու զգացում ունենանք. այն մեկ բանը՝ ամենալավ բանը, որ պետք է անենք, Նրան դիպչելն է, Նրան երկրպագելը, Նրան հավատալը, Նրան կլանելը, Նրան վայելելը, Նրան ձգտելը և Նրան շահելը՝ Սղմ 27:4, Փլպ 3:8, 14:

Զ. Երբ մենք իսկապես ժամանակ ենք տրամադրում Աստծու խոսքի մասին խորհրդածելուն, մենք ներարկվում ենք Աստծով, շողում Աստծով և շողարձակում Աստծով (Բ Կրթ 3:15-18). ահա թե ինչու ենք մենք երգում. «Աղոթքով Տիրոջ հետ շփվիր, /Իր հայացքի մեջ սուզվիր, Հագեցած Իր գեղեցկությամբ՝ /Իր պատկերն արտացոլիր»՝ (Օրհներգ 528, տուն 6):

Է. Քանի որ մեր Տերը և մեր Աստված մեզ պատվիրել է մտնել Իր մեջ և վայելել Իրեն՝ որպես համարժեցանդակ բարի երկրի իրականության, մենք պետք է «ամեն» ասենք Նրա խոսքին, որպեսզի լինենք ուժեղ, քաջասիրտ և չվախենանք ու չսարսափենք, քանի որ Եհովան՝ մեր Աստված, մեզ հետ է ուր էլ որ գնանք, երբ բոլոր ազգերին աշակերտ դարձնենք, որպեսզի թագավորության մարդիկ լինեն մինչև այս դարաշրջանի ավարտը՝ Նրա գալու ժամանակը՝ Հս 1:9, Մտթ 28:20: